Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

19 NOV 2011

ՃԱԻ-ԲՈՆ

# ԿՈՎԿԱՍ

1925 ԹԻՖԼԻՍ

Арм.
3-3726а
891.99
Ш-29
3-3726а
Ан- 1132

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

ՃԱՒ - ԲՈՆ

# ԿՈՎԿԱՍ

ՎՈՐԴԻՍ ՊՈԵՄ

Г. П. Б. в Лнгр.
1930 г.
Акт № 12, 8/338

Инв. № 22542

1925 Թ. ԹԻՖԼԻՍ

13 JUL 2013

47235

40746-67

Главлит № 763 Тифлис. Тираж 1000

Թիֆլիս, Ժ. Տ. Գ. Խ. Պոլիգր. Տր. 4-րդ տպ., Պուշկին. փ. № 3

1.

Այսօր, իմ տողերում,
ժպտող աչքերիս մեջ պոետական— ,
բերում եմ քեզ
բոլշևիկի զվարթահնչ ծիծաղ:
Ծիծաղս նոր,
        էնպես ջահե՛լ.—
ծիծաղս, գալիքը պատմական.
ծիծաղս, խինդ,
        որերս հրճվանք
        արևախաղ—
            —Կոմկա՛ս!...

2.

Յերկրագնդի մշուշներում—
դո՛ւ,
— մի լուսե միրաժ...
Քո Ելբրուսից
        մինչ կապույտը,
        մինչև արև—
շալակել ես
        հագսերը քո՝

— հույսերդ վորպես բաղաժ.—
քայլում ես,
փայլում՝ դեմքիս—
պատմական հեռուներից,
բերում ես
այսորվա մի բարև...

3.

Դրել ես դու
քո թոքի մեջ —
արևակալ
քաղաքների շորքը
շքեղ,
ու—
յերգերը Հոկտեմբերյան.—
— քաղաքները
Բոլշեվիկցած
ու հյուրնկալ—
քո պատմական կնճռոտված
դեմքի վրա...

4.

Ճամփաներդ—
անանցելի, պարսպակերպ
ու
հիասքանչ՝



— այսոր լարած, —
այսոր
փորած հազար ուղի:
Քո յերկնաբերձ, գագաթնամոտ
մառոտի կանչ —
ավանները,
սլանում են
ու—
վոսկեգույն, փոշիակալ,
չափ են ընկնում
յերկայնքներով խճուղու...

5.

Լեռներդ —
կանաչ, ծաղկոտ.
լեռներդ—
վորպես փիրուզազարդ գետին.
լեռներդ—
հովվական դյութող
սրնգահամերդ...
Ինչ լավ է — Կովկաս.
լավ է
ու
սիրուն—

վոր դրելես քո սրտին
տեխնիկա—
—ավտո՜ն!
(ապա՜, գեղածիծաղ
ջահել չոբանի
մի յերգ...)

6.

Նստել են—
բարձր, կանանչոտ ուսերիդ.—
Նստել են—
վո՜նց վոր լեռնային բազեն—
գյուղերը.—
գյուղերը, հավքերի նման՝
ընդարձակ թևերիդ
հրացայտ!...
Նստել են.
վճիռը ճակատին—
ուզում են քեզ հետ մի տեղ,
գալիքի արևին վազեն...
Վազել են—
ու
կանգնել հիմա։
Այսօրից Կովկաս,
խարույկ ես դու—
Սոցիալիստական հրապարակ
բացատ!...



7.

Կյանքը, առել է մի նոր պատյա.
յերկիրդ դարձել է
մի վա՜զք արագ...
Կուրծքդ—
կարմիր դրո՜շ,
պարզել ես
սրտիցդ հեռո՜ւն—
գրկել ես
չինն, արմբը՝
հրճվում ես դու։
Սղմած, շոյում ես
քո հանքոտ կրծքի տակ.—
— շոյվում ես!...
Շոյում են քեզ որեր—
Բաքո՜ւն,
Թիֆլիսը,
ու Նաիրյան
Յերևանը յեռուն!...

8.

Տվել ես
պայքարին յերեկվա—
ուժերդ քո յերկրում յեղած.
տվել ես—
յերկրիդ հանքերից—սիրածդ
վարպետին։

11.

Քո գրիկի մեջ—
Ազգամիջյան վոչ մի շփոթ.
վոչ մի արյուն,
վոչ մի շուկա—
            անկարգ
ու նեղ!
Քո պոետի այս գրքի մեջ—
պոեմներից կոլեկտիվի
            բոլոր յերգում -
չը կա արցունք,
            չըկա մութ։
Չկա—
մահագույժի մի անդուր
            բոթ.—
չիք են հիմի
բուրժուական մոնոպոլյան,
            — հինը տգեղ. .

12.

Ու դու Կովկաս—
այսօր շիկով
            շի՛կ ես անում.—
այսինքն մերթ
լույսի խաղով՝
            —ռադյո պարի!



Կովկա՛ս—
դու մի՜շտ պատրաստ յեղիր,
վոր քո սրտի
կուլտուրական մեծ խարույկից,
մի լո՛ւյս, մի
            հո՛ւյս
տեղավորես ամեն դռա՛ն—
                        ամեն տնում!...
Միրաժակերպ արտացոլված
պատկերից մեջ—
            —լույսեր լինեն.
Թռիչք!—
            Թռի՛չք
ամեն մի օ՛ր, ամե՛ն տարի!...

13.

Յես հիշում եմ—
յերբ յեռացիր են որերին.
— Եվ դու Կովկա՛ս—
            աչքերիդ հետ,
            ու նրա մեջ՝ պայքար յեղա՛վ—
յերկու հումկո՛ւ,
            յերկու հսկա
            դասակարգում!...
Յես հիշում եմ—
            ինչպես անցար
հաղթանակող

Հոկտեմբերին,
ու
յերգվեցիր խարույկ պահել—
քո հինօրյա
        շքեղ գրկում!!!
Ու—
ծովից ծով, մի ակնարկից,
        մի ժպիտում—
ռազմանավեր ափտանացան
        հյասքանչ։
Իսկ
լազուրում, ինքնաթիռը—
կարմրագեղ ու Կովկասյան
ինքնաթիռը—
        —քո յերկնքում!
Նրանք յերախ մատռոսները—
կարմրակերտ ճամփաներից,
հաղթ գուժկանի մի
        ռազմակոչ.—
— ու մոտիկից,
կարմիր Ասյան!...

14.

## ԻՄ ՊՈԵՏԱԿԱՆԸ

Հաղթանակի հսկա մի պար հիմի.—
մեր լեռներում խորհրդակիր
        մի բորբ կահույք.



արևելցու,
կովկասեցու մեր սրտերը ի մի—
լուսում են վորպես խարույկ.
Աղգամիջյան են հինօրյա
        մքլած յերկրից—
Կովկասը հաղթ,
հիմա կանգնած մի դիսկ վորպես
իր պատմական սալեատկան
        կռիվներից—
— կարմիր պարում
խարույկվում եմ ինչպես հրկեզ!...

* * *

Կովկասը հին,
Կովկասը խենթ—
        —լարած մի Ուժ,
Կովկասը լույս,
Կովկասը հույս—
        —տարված մի տոնկ,
աշխարհների սրտերին մոտ—
        թե վառ թե ուշ—
պիտի պայթի, պիտի խայթի
կարմիրախաղ—
        ու լիաթոք!...
Շարանները՝ վոնց կարավան
ծալքաշարով ծովից ծով—
— լեռների պար
        կարծես գլամամբ շարքի յելած.
Կովկասը նոր,
Կովկասը հին—
բյուրազգերի կուռ մարդկանցով—

խարույկվել է՝
լույս է տալիս հրակալած
ՀՈԿՏԵՄԲԵՐՈՒՄ!...
Հրաբխակալ Ելբրուսից
մինչև Մասիս —
մինչև հողը կարմրակամար իմ Նաիրու —
այսօր մի տոն.
լեռնաշխարհի բագիններն վորպես հրկեզ —
համազգային գաշն է կնքվել.
— Ցեղերացյան՝ նոր պատմության,
նոր որերու...
Յեվ բագինին վորպես մի ցույց—
մի վողջակեզ
ֆեոդալական կարգերին բութ,
կարգերին հին
Կոմկուսափառ Կազբեկները
մի մի կրկես.—
Նոր խաղերով
ՏԵԽՆԻԿԱՅԻ —
վոլխովյական,
— խորհրդային!...

15.

## ՊՈԵՄԱԿԱՆԸ ՄԻԱՅՆ

Լայնատարած ու ցողաշաղ
հորիզոնում,
վառ
հիասքանչ, —



— հենց են վերջին իլլիչական
լուռ սուլից—
այսօր ժխոր,
այսօր միտինգ,
այսօր ձոնում.—
ձեն են տալիս
թե հաղթական,
թե հուսալից...
Վորոնց լազուր հորիզոնում
հրդեհավառ
ինքնաթիռը,
մի վիթխարի պողպատաթև կանչող թռչուն.
վորոնց անշուք
են լեռնային փողոցներից,—
մի լուսավոր
ռադյոների ու ելեկտրի
խաղը հնչուն
ու միշտ հպարտ, հիասքանչ
յերգերը գոռ,
— հիմա խաղաղ
լարված մի առկ,
վազող մատոռ.
Հոկտեմբերյան տարիների
ամբարացած ռեզերվներում —
կանչը՝
—гудок!!!

*
* *

Ամբոխները —
վոր լեռնային աուլներից

*խենթ են յեղել ինչպես վայրի,*
*ինչպես խելառ,*
*արդ*
*կարմրահույս լույս են շաղում*
*ամե՛ն տեղի,*
*ամե՛ն տնից.*
*բոլորը մե՛կ,*
*մեկը հազա՛ր՝*
*պայքարում են այնպես ախտա՛ն*
*այնպես*
ՀԱՄԱՌ!...
ԿՈՎԿԱՍ!!!

*Կախնեթյա, 1924 թ.*

ՀՍՍՌ-Арм. ССР

Арм.
3-3726а

**ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ**

ՊՈԵՏ —— ԼՈԹԻ

ԱՍՏՎԱԾՅԵՐԱԿ —— ԺԱՅԹՔ

**ՆԱԻՐԱԿԱՆ ՎԻՊՅԵՐԳ**
(Պատմվածքներ)

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ——
**,,ՑԱՆԿՈՒՎՇՉԻՆԱ‘‘**

**ԳԻՆԸ 25 ԿՈՊԵԿ**

ՀՀ Ազգային գրադարան
NL0352772

47235
Арм
3-3726 2
891.99
Т-29